| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 1 | Կարենը համացանցում նկար էր որոնում, և բառը մուտքագրեց, էկրանին միաժամանակ երևացին այս  երկու պատկերները.<br> <br>Ո՞ր բառն էր մուտքագրել Կարենը:<br><br>*Ա.* գառ<br>*Բ.* ծաղիկ<br>*Գ.* քիթ<br>*Դ.* հոտ<br>*Ե.* արոտ | Դ | հոտ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 2 | Կետադրական ո՞ր նշանն է հնարամտորեն թաքնվել բերված բառաշարքում:<br><br>*մեղու, իրական, ջրաներկ, արագ, կախույք, երկար, տանիք*<br><br>*Ա.* չակերտ<br>*Բ.* ստորակետ<br>*Գ.* վերջակետ<br>*Դ.* ապաթարց<br>*Ե.* միջակետ | Ե | միջակետ |
| 3 | Միքայելը ***թուր, հուշ, ձող, կաղ, վեճ*** բառերով կազմեց մի բառաշարք՝ գտնելով բառերի մի հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառն է սխալմամբ հայտնվել բառաշարքում:<br><br>*Ա.* թուր<br>*Բ.* հուշ<br>*Գ.* ձող<br>*Դ.* ճաղ<br>*Ե.* վեճ | Ե | վեճ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 4 | Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել տառաշարով:<br><br>**Այբրեայբմենըթզիմնուայբցոտյունունու**<br><br>*Ա.* Այբբենարանում նկարներ կան:<br>*Բ.* Արան ու Արմենը գնացին տուն:<br>*Գ.* Արամը գնաց տուն:<br>*Դ.* Այդքան շուտ տուն չեն գնա:<br>*Ե.* Արան տնկիներ բերեց տուն: | Գ | Արամը գնաց տուն: |
| 5 | Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն, որ փակագծերից ձախ և աջ գրված բառերի հետ կազմի նոր բառեր:<br><br>*կայծ (*  *փի*<br><br>*Ա.* ակ<br>*Բ.* գետ<br>*Գ.* ծով<br>*Դ.* շաղ<br>*Ե.* քար | Ե | քար |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 6 | Մեղվիկի փոխարեն պատասխանի տարբերակներից ո՞րը բերված բոլոր բառերի հետ կկազմի նոր բառեր:<br><br>*Ա.* հար<br>*Բ.* վար<br>*Գ.* դար<br>*Դ.* մար<br>*Ե.* շար | Բ | վար |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 7 | Շատ հաճախ եք ինձ գործածում, երբ որ ինչ-որ տեղ եք գնում:<br>Ինձնից առաջ թե *մ* դնեք, ձեռք ու երես կսնացնեմ:<br>Եթե հանկարծ դուք *ջ* դնեք, պապակ սրտեր կզովացնեմ:<br>*Լ* թե դնեք, ձեզ նորություն եւ կբերեմ,<br>*Թ* ու *ս* էլ եթե դնեք, թշնամուց եւ ձեզ կփրկեմ:<br><br>Ո՞ր տարբերակն է ճիշտ պատասխանը:<br><br>*Ա*. որ<br>*Բ*. ար<br>*Գ*. ուր<br>*Դ*. եր<br>*Ե*. ով | Գ | ուր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 8 | *Եզան կերածը դարման ու սեզ էր,*<br>*Ինքը բարության քայլող մի դեզ էր,*<br>*Համառ էր, բայց և խոնարհ ու հեզ էր,*<br>*Ի՞նչ աներ, եզ էր…*<br><br>Ստորև բերված ո՞ր բնութագրումը չի համապատասխանում Հ. Սահյանի նկարագրած եզին:<br><br>*Ա.* Եզը սնվում էր խոտաբույսերով:<br>*Բ.* Եզն անչար ու բարի էր:<br>*Գ.* Եզան կերածը հարդ էր:<br>*Դ.* Եզը քայլում էր դիզած խոտի վրայով:<br>*Ե.* Թեև եզը հաստատակամ էր, բայց հնազանդվում էր: | Դ | Եզը քայլում էր դիզած խոտի վրայով: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 9 | Երկվորյակ մեղվիկների փոխարեն տեղադրելով պատասխանի տարբերակները՝ Գիտունիկը կազմեց բառեր, բայց մի տարբերակով ճիշտ բառ չստացվեց: Ո՞րն է դա:<br><br><br>*Ա.* Ք<br>*Բ.* Ճ<br>*Գ.* Ց<br>*Դ.* Ձ<br>*Ե.* Գ | Ա | քամք |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 10 | Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը։<br><br>*կամակոր — որոր*<br>*լսարան — աներեր*<br>*համախոհ — ոհմակ*<br>*հայտնի —* <br><br>*Ա.* ինքնուրույն<br>*Բ.* նիհար<br>*Գ.* հայտնություն<br>*Դ.* ինքնարժեք<br>*Ե.* անհայտ | Բ | նիհար |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 11 | Խոհարար նապաստակը սիրում է բանջարեղենը կաթսայի մեջ լցնել որոշակի օրինաչափությամբ։<br><br>Ի՞նչ բանջարեղեն պիտի լինի մեղվիկի փոխարեն։<br><br>*Ա.* պղպեղ<br>*Բ.* սմբուկ<br>*Գ.* բազուկ<br>*Դ.* բամիա<br>*Ե.* գազար | Գ | բազուկ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 12 | Թվարկված բառերից քանի՞սն են մասնագիտությունների անվանումներ.<br><br>*ուսուցիչ, նկարիչ, ջեռուցիչ, շարժիչ, մարզիչ, տպավորիչ, կափարիչ, ոսկերիչ, անջատիչ*<br><br>*Ա.* 3<br>*Բ.* 4<br>*Գ.* 5<br>*Դ.* 6<br>*Ե.* 7 | Բ | 4 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 13 | Ո՞ր բառն է գաղտնագրված:<br><br>*բե՛ր (հականիշը) + տա՛ր (հականիշը)*<br><br>*Ա.* բերան<br>*Բ.* տերտեր<br>*Գ.* անտարբեր<br>*Դ.* տարբերակ<br>*Ե.* տարբեր | Ե | տարբեր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 14 | Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:<br><br>~~Դ~~ Դ Ր<br><br>*Ա.* դրդել<br>*Բ.* անդարդ<br>*Գ.* անարդար<br>*Դ.* անդադար<br>*Ե.* անդուր | Դ | անդադար |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 15 | *Դամշիտը կրանարչով պախտլվեց:*<br><br>Յուրաքանչյուր տառախմբից քանի՞ տառ հանենք, որ ստացվի նախադասություն՝ առանց տառերի տեղերը խախտելու:<br><br>*Ա.* 1<br>*Բ.* 2<br>*Գ.* 3<br>*Դ.* 4<br>*Ե.* 5 | Բ | 2 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 16 | Լուծելով բերված բառային արտահայտությունը՝ կգտնեք, թե ինչ բառ է թաքցրել մեղվիկը:<br><br>*արվեստի տեսակ + պտուղ =* <br><br>*Ա.* պարեղանակ<br>*Բ.* նկարակալ<br>*Գ.* երգեհոն<br>*Դ.* բալենի<br>*Ե.* վերելակ | Գ | երգեհոն |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 17 | Պատասխանի տարբերակներից չորսին միավորում է մի հետաքրքիր օրինաչափություն, իսկ մեկը դուրս է այդ օրինաչափությունից: Ո՞րն է այդ բառը:<br><br>*Ա.* ուզել<br>*Բ.* սրահ<br>*Գ.* դրամ<br>*Դ.* գրամ<br>*Ե.* ուտել | Ե | ուտել |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 18 | Տարբերակներից ո՞րը կարող է դառնալ նախադասություն, եթե կարդանք հակառակ ուղղությամբ:<br><br>*Ա.* տապակ<br>*Բ.* սրտատրոփ<br>*Գ.* տախտակ<br>*Դ.* պայուսակ<br>*Ե.* քնքուշ | Ա | տապակ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 19 | Ինձ կգտնես աստղների ու մատնոցների տուփում: Եթե ինձ անիվ ավելացնես,կհայտնվեմ հագուստիդ վրա:<br><br>Ա. գրպան<br>Բ. կոճ<br>Գ. մերակ<br>Դ. կարկատան<br>Ե. գոտի | Բ | կոճ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 20 | Այս մի Ք-ն էլ խոր է, խոր,<br>Ինչպես բառն իր խորախոր։<br><br>*Ա.* չքավոր<br>*Բ.* խորհուրդ<br>*Գ.* խորանարդ<br>*Դ.* խորամանկ<br>*Ե.* խորք | Ե | խորք |
| 21 | Ո՞ր տառը կկերպարանափոխի տրված բառերը։<br><br>***ավել, վեր, երկ, կար, վազ***<br><br>*Ա.* ս<br>*Բ.* դ<br>*Գ.* ն<br>*Դ.* զ<br>*Ե.* թ | Գ | ն |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 22 | *Երեք տառ ունի, տե՛ս,*<br>*Վառվում է ասես,*<br>*Փոխես մի տառը,*<br>*Կհանգչի բառը:*<br><br>*Ա.* հոն *Բ.* հոր *Գ.* հուր *Դ.* մուր *Ե.* թուր | Գ | հուր |
| 23 | Պատասխանի տարբերակներից չորսը նույն ընտանիքից են: Ո՞վ է հյուրը:<br><br>*Ա.* բոժոժ<br>*Բ.* գաճաճ<br>*Գ.* մախաղ<br>*Դ.* բազազ<br>*Ե.* հոպոպ | Գ | մախաղ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| **24** | Ամեն անգամ մեկական տառ ավելացնելով այդ թվին՝ Լևոնը մեկ ստացավ խիղճ, մեկ՝ միրգ, մեկ՝ կետադրական նշան, մեկ՝ խավար: Ո՞ր թվին էր Լևոնը տառեր ավելացնում:<br><br>*Ա.* 2<br>*Բ.* 4<br>*Գ.* 6<br>*Դ.* 8<br>*Ե.* 10 | Դ | ութ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 25 | Արամը մի ձայնավորով և տրված բաղաձայններով կազմեց յոթտառանի մի բառ:<br><br>*ԿԿՂՉ*<br><br>Ո՞ր ձայնավորն օգտագործեց Արամը:<br><br>*Ա.* ու<br>*Բ.* ե<br>*Գ.* ա<br>*Դ.* ո<br>*Ե.* ի | Գ | ա |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 26 | Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը։<br><br>ջուր — 3<br>ջրաման — 3<br><br>հուր — 3<br>հրշեջ — 2<br><br>ընկույզ — 6<br>ընկուզենի — 4<br><br>գրիչ — 4<br>գրչաման — <br><br>*Ա.* 2<br>*Բ.* 3<br>*Գ.* 4<br>*Դ.* 5<br>*Ե.* 6 | Բ | 3 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 27 | Միմյանց գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները հայերենի այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացրել են կետերից և մի գծիկից բաղկացած ծածկագրով: Դրանում՝   Վերհիշի՛ր այբուբենը, կռահիր, թե ի նչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե հետևյալ ծածկագրում ինչ բառ է գաղտնագրված:  Ա. այբուբեն<br>Բ. ընտանիք<br>Գ. հայերեն<br>Դ. հայրենիք | Դ | հայրենիք |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատասխան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 28 | Լուծելով նկարելուկը՝ կիմանաս, թե որն է գետի ուղին, և ինչ բույսեր են աճում գետափին:<br><br>*Ա.* ջրափոս, բարդի, ելակ<br>*Բ.* հուն, վարսակ, դեղձենի<br>*Գ.* հոր, հոնի, երինջ<br>*Դ.* հուն, վարդ, եղինջ<br>*Ե.* ակոս, սոխ, հաղարջ | Դ | հուն, վարդ, եղինջ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 29 | Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:<br><br>Ա. կորիզ<br>Բ. եկվոր<br>Գ. կենվոր<br>Դ. կորուստ<br>Ե. կտոր | Գ | կենվոր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 30 | Օգտվելով հայոց տառերի թվային արժեքներից՝ գտիր, թե ինչ բառ է ծածկագրված:<br><br>**2023**<br><br>*Ա.* սարդ<br>*Բ.* սիզ<br>*Գ.* սխալ<br>*Դ.* սեր<br>*Ե.* սեզ | Բ | սիզ |